ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» սեպտեմբերի 2023թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ
ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, հիմք ընդունելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ ԵԿԴ/2361/02/08 վճիռը, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2020 թվականի հունիսի 10-ի թիվ ԵԿԴ/2361/02/08 կատարողական թերթի պահանջը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2023 թվականի մայիսի 26-ի թիվ ԳՍ/21.1/15433-2023 գրությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, Արաբկիր վարչական շրջանում գտնվող 01-003-0408-0073 կադաստրային ծածկագրով հողամասից 0,07997հա մակերեսով հողամասը նվիրել Հայաստանի Հանրապետությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող՝ Արաբկիր վարչական շրջանում գտնվող 01-003-0408-0073 կադաստրային ծածկագրով հողամասից 0,07997հա մակերեսով հողամասը նվիրել Հայաստանի Հանրապետությանը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ ԵԿԴ/2361/02/08 քաղաքացիական գործով վճռի, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2020 թվականի հունիսի 10-ի թիվ ԵԿԴ/2361/02/08 կատարողական թերթի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս ՀՀ կառավարության, պարտավորեցվել է Կորյուն Մովսեսյանի իրավահաջորդ Արմեն Կորյունի Մովսիսյանին 01.01.2002-15.04.2004թթ. ժամանակահատվածում գործող խմբագրությամբ «Բռնադատվածների մասին» օրենքի 6-րդ հոդվածով և 05.12.2002-31.12.2003 թթ. ժամանակահատվածում գործող խմբագրությամբ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգով անհատույց սեփականության իրավունքով հատկացնել հողամաս:

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 11.12.2018թ. կայացված վճիռը և 10.06.2020թ. կատարողական թերթի պահանջը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2023 թվականի մայիսի 26-ի թիվ ԳՍ/21.1/15433-2023 գրությամբ առաջարկվել է Երևան քաղաքի ավագանու քննարկմանը ներկայացնել Արաբկիր վարչական շրջանում գտնվող 01-003-0408-0073 կադաստրային ծածկագրով հողամասից 0,07997հա մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրելու մասին որոշման նախագիծը՝ հետագայում այն Արմեն Կորյունի Մովսիսյանի հատկացնելու նպատակով:

ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ պետության և համայնքների սեփականության հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրվում են գյուղատնտեսական գործունեության համար և որպես տնամերձ կամ անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող այն բռնադատվածներին, ովքեր չեն օգտվել հողի սեփականաշնորհումից, նախկինում չեն ստացել (ձեռք բերել) տնամերձ կամ բնակելի տան շինարարության և դրա սպասարկման համար չծանրաբեռնված հողամաս այն բնակավայրերում, որտեղ նրանք բնակվել են բռնադատման պահին:

Հողամասերն անհատույց տրամադրվում են պետության սեփականություն հանդիսացող հողամասերից, իսկ պետության սեփականություն հանդիսացող

հողամասերի բացակայության դեպքում՝ համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերից:

Քննարկվող հողամասը, համաձայն ՀՀ կառավարության 15.12.2005թ. հ.2330-Ն որոշումով հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծում ամրագրված պայմանական նշանների, գտնվում է հասարակական կառուցապատման գոտում, իսկ ՀՀ կառավարության 04.06.2020թ. հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն, ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի՝ գտնվում է 8-րդ գոտում:

Հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2023 թվականի մայիսի 26-ի թիվ ԳՍ/21.1/15433-2023 գրությունը, թիվ ԵԿԴ/2361/02/08 քաղաքացիական գործով 11.12.2018թ. կայացված վճիռը և 10.06.2020թ. կատարողական թերթի պահանջը՝ անհրաժեշտություն է առաջացել նախապատրաստել Երևան քաղաքի ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամաս նվիրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամաս նվիրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ